Հետազոտական աշխատանք

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Սովորողների շրջանում հայոց լեզվի նկատմամբ հետաքրքրության զարգացմանը նպաստող ռազմավարությունների կիրառումը

Կազմեց՝ Հասմիկ Ավանեսյան

Կապանի Հունան Ավետիսյանի անվան N 9 ավագ դպրոց

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

Կապանի N2 ավագ դպրոց ՊՈԱԿ

Վերապատրաստող կազմակերպության անվանում

Կապան 2023

Բովանդակություն

1.Նախաբան

2.Հետազոտական համատեքստ

3.Գործնական համատեքստ

4.Հետազոտության ընթացք

5.Տվյալների մշակում և վերլուծություն

6.Ամփոփում

7.Գրականության ցանկ

8.Հավելվածներ

Սովորեցրու ինձ ինքնուրույն սովորել
Մոնտեսորի

Նախաբան

Սույն աշխատանքը սկսելուց առաջ երկար մտորել եմ, թե հետազոտական աշխատանքս ինչ վերնագիր պիտի ունենա, հետո ինքս ինձ հարցրի, թե դասավանդման գործընթացում ինչն է իսկապես ինձ հետաքրքրում, ամենից շատ ինչի մասին եմ մտածում յուրաքանչյուր դաս պլանավորելիս, հիշեցի, որ միշտ հարցնում եմ՝ ինչո՞վ հետաքրքրեմ, որ հնարավորինս բոլորն ընդգրկվեն, հատկապես նրանք, ովքեր ամենևին մոտիվացված չեն առարկայի նկատմամբ, օրվա նյութի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու ի՞նչ հնարներ, մեթոդներ, ի վերջո, ի՞նչ ռազմավարություն պետք է մշակել դրա համար. սա էլ դարձավ իմ հետազոտության նյութը: Ընտրված մեթոդները հիմնականում արդարացրել են իրենց. դա ակնհայտ էր լինում ընդհանուր ակտիվությամբ, ուսումնական բանավոր և գրավոր ցուցանիշներով և այլնով, բայց քանի որ հետազոտական աշխատանքի պահանջներից էր վկայությունների, այն է՝ կոնկրետ փաստական տվյալների հավաքագրում, վերլուծություն, և չափման այդ արդյունքները պետք է տեսանելի ներկայացվեին իրենց բացարձակ եւ հարաբերական դրսևորումներով, որոշեցի քննության առնել մեկ-երկու կոնկրետ հարց:

Հետազոտության արդյունքում կդիտարկեմ հետևյալ մոտեցումները.

ա/ուսումնառության <u>ավանդական մոտեցում</u>, մեթոդը՝ դասախոսություն, երբ դասը հենված է մեծավ մասամբ ուսուցչի բացատրությունների վրա

բ/ուսումնառության ակտիվ մեթոդներից՝ ինքնուրույն աշխատանք *<u>դասագրքային</u>* <u>օրինակներով</u>, ուղղորդված ընթերցանություն

գ/ուսումնառության ակտիվ մեթոդ՝ թեմայի ինքնուրույն ուսումնասիրություն՝ *<u>ոչ դասագրքային</u>* օրինակներով՝ կյանքից վերցված, սովորողներից յուրաքանչյուրի նախասիրությանը /ֆուտբոլ, երաժշտություն, աշխարհի հայտնի մարդիկ, բժշկություն ևն/ վերաբերող, նրանց հետաքրքրող թեմաներից կազմված օրինակներով/տես՝ հավելված/:

Յուրաքանչյուր մոտեցման դիտարկումները կվերլուծեմ, կպարզեմ, թե ինչպես են այս մոտեցումները ազդում սովորողների ուսումնառության ցուցանիշների վրա, կհամեմատեմ և վերլուծության արդյունքները կներկայացնեմ համեմատական կարգով քարտեզագրման միջոցով:

Հետազոտության համար ընտրվել է XI բնագիտական հոսքի դասարանը, որտեղ սովորողները ավելի քիչ մոտիվացված են:

Հետազոտական համատեքստ

Ուսուցչի մասնագիտական ամենակարևոր որակներից մեկը դասը ճիշտ պլանավորելն է : Հստակ գիտակցելով դասի խնդիրներն ու նպատակները և ճիշտ պլանավորելով դասը՝ ուսուցիչը կարող է մեծապես նպաստել ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Դասի պլանավորումը կարողություն է, ինչի ձեռքբերման ուղղությամբ անհրաժեշտ է հետևողականորեն աշխատել: Ահա մի քանի դրույթներ, որոնք կարող են օգտակար լինել դասերի պլանները կազմելիս:

Ցանկացած դաս պլանավորելուց առաջ անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին.

ի՞նչ սովորեցնել,
ինչու՞ սովորեցնել
ինչպե՞ս սովորեցնել:
Դասն արդյունավետ կլինի, եթե այն պլանավորելուց առաջ ուսուցիչն ունենա հետևյալ հարցերի պատասխանները.
1.Ինչպե՞ս պետք է պարզեմ սովորողների նախնական գիտելիքները: Ինչպե՞ս կարող եմ օգնել սովորողներին գնահատելու այն, ինչ իրենք արդեն գիտեն կամ կարող են անել տվյալ նյութի հետ կապված: Ինչպե՞ս կարող եմ օգնել նրանց արդեն ունեցած գիտելիքների հիմքի վրա նոր գիտելիքներ կառուցելու, ինչպես նաև՝ չիմացածը բացահայտելու, պարզելու գործում:

2. Ի՞նչ պետք է կարողանան անել սովորողները դասի ընթացքում ձեռք բերած գիտելիքների շնորհիվ: Ի՞նչ չափով են դասի նպատակները բխում չափորոշիչներից:

3. Ինչպե՞ս են սովորողները ցուցադրելու այն, ինչ գիտեն և կարող են անել:

Գնահատման ի՞նչ չափանիշներ են կիրառվելու :

4.Ինչպե՞ս են մատուցվելու նոր գիտելիքները, ներկայացվելու հմտությունները:

Հաշվի առնելով սովորողների ունակությունները՝ ո՞րն է լինելու նոր նյութը ներկայացնելու եղանակների ու միջոցների լավագույն ընտրությունը:

5.Ինչպե՞ս կարող եմ սովորողների համար ավելի դյուրին դարձնել նոր տեղեկատվության ընկալումը կամ գործողությունների մշակումը: Որո՞նք են հիմնական հարցերը, գործողությունները կամ հանձնարարությունները:

6. Ինչպե՞ս եմ դասի ընթացքում ստուգելու սովորողների կողմից նյութի ընկալումը:

7.Ինչպե՞ս եմ հնարավորություն տալու սովորողներին՝ իրական կյանքի հետ կապեր ստեղծելու և կիրառելու մտածողության բազմազան և բարդ հմտություններ, որոնք անհրաժեշտ են դասի ընթացքում և դրանից դուրս հաջողության հասնելու համար:

8.Ի՞նչ է անհրաժեշտ անել ուսումնական միջավայրում հարմարվելու և ուսուցման արդյունավետության հասնելու համար:

Այս ամենը, իհարկե, դասը պլանավորելու կարևոր գործոններ են: Հարցն այն է, թե ինչպես հետաքրքրություն առաջացնել առարկայի նկատմամբ, ինչպես ապահովել սովորողների դրդապատճառավորված/մոտիվացված/ ուսումնառությունը:

Նախ՝ տեսնենք, թե ինչպես են բացատրվում հետաքրքրություն և մոտիվացիա հասկացությունները:

Իմացական հետաքրքրություն տերմինը ազատ հանրագիտարանում ձևակերպվում է հետևյալ կերպ.

Այն կարևորագույն ու բարձրագույն հետաքրքրությունները, որոնք անձին մղում են դեպի երևույթների խոր իմացություն, ակտիվացնում են ուսումնական և հետազոտական գործունեությունը: Իմացական հետաքրքրություններն

ուղղակիորեն բավարարում են մարդու իմացական պահանջմունքը, այլ ոչ թե օժանդակ ֆունկցիոնալ դեր են խաղում՝ այլ պահանջմունքների բավարարման համար պայմաններ ստեղծելով: Դպրոցական տարիքում ինքնուրույն իմացական հետաքրքրությունների առկայության նշաններ են՝ լրացուցիչ գրականություն կարդալու, տարբեր խմբակների պարապմունքներին մասնակցելու՝ աշակերտի ձգտումը և վարքի այլ դրսևորումներ:

Սովորողների մոտիվացիայի հարցը և նրա ուսումնասիրությունը կրթության ոլորտի հոգեբաններին առավել հուզող հարցերից է: Այս հարցի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ են արվել և արվում:

Մոտիվացիան տարբեր կերպ բացատրվել է որպես հոգեբանական երևույթ: Մի դեպքում՝ որպես վարքագիծը որոշող գործոնների շարք: Մյուս կողմից՝ որպես դրդապատճառների ամբողջություն: Երրորդում՝ որպես մի տեսակ իմպուլս, որը հանգեցնում է մարմնի գործունեությանը և որոշում դրա ուղղությունը:

Դպրոցական մոտիվացիան բարդ հոգեբանական երևույթ է, և հեշտ չէ նշել մեկ երևույթ, որը ոչնչացնում կամ խթանում է այն: Ընդհակառակը, այսօր կան բազմաթիվ գործոններ, որոնք կարող են թե՛ դրական, թե՛ բացասական ազդել սովորողների մոտիվացիայի վրա:

Գործոններից մեկն այն է, որ ժամանակակից կրթական համակարգում սովորողները պետք է հետևեն արտաքին պարտադրված երթուղուն, հասնեն արդեն սահմանված նպատակների /ուսուցչի, ուսումնական հաստատության, ևն/ :

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դա բավականին նվազեցնում է սովորողի մոտիվացիան:

Մեծ նշանակություն ունի նաև կիրառելիության բացակայությունը. այն, թե իրենց ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները ինչքանով են օգտակար իրենց առօրյա կյանքում:

Մասնագիտական գրականության մեջ մոտիվացիայի երկու տեսակ է նշվում՝ արտաքին և ներքին:

Արտաքին է համարվում, երբ նախատեսվում է ստանալ որոշակի արտաքին մրցանակ, երբ երեխան ինչ-որ առաջադրանք է կատարում, որպեսզի բարձր գնահատական ստանա, չձախողի ինչ-որ բան, չպատժվի նն:

Ներքին մոտիվացիան կախված չէ արտաքին գործոններից, ինչ-որ մրցակցությունից: Այս դրդապատճառը առաջանում է հաճույքի համար, սովորողը վարձատրություն չի ակնկալում, դա անում է իր շահերի համար:
Փորձագետները կարծում են, որ սովորողների շատ ցածր մոտիվացիան կարող է հանգեցնել ավելի լուրջ խնդիրների. երբ սովորողը օրվա մեծ մասը անցկացնում է մի բան անելով, որ իրեն ընդհանրապես չի հետաքրքրում, կարող է ունենալ կենտրոնանալու դժվարություն, ըմբոստ վերաբերմունք, ընկճվածություն, ցածր ինքնագնահատական, իր կյանքը վերահսկելու խնդիրներ:
Եվ իսկապես, ինչպե՞ս բարձրացնել մոտիվացիան:

Գործնական համատեքստ

Հետազոտելու համար ընտրվել է XI ֆիզմաթ և բնագիտամաթեմատիկական ենթահոսքով դասարանը, որտեղ հայոց լեզվի նկատմամբ մոտիվացիան բարձր չէ: Հետազոտական աշխատանքի ընթացքին համընկել է «Գոյական» թեման, հետազոտությունը կատարվել է «Գոյականի հոլովները» թեմայի շուրջ. հատկապես ուղղական, սեռական, տրական հոլովների շրջանակում :

Հետազոտության ընթացք

Դիտարկում 1

Քանի որ այս դասարանում գրելու, դասագրքով ինքնուրույն աշխատելու ցանկությունը մեղմ ասած մեծ չէ, այլ ցանկություն կա պասիվ՝ ունկնդրողի դերում լինել, դրա համար ուղղական հոլովն անցնելիս փորձարկել եմ ավանդական՝ դասախոսության մեթոդով: Այս դասը պլանավորված էր՝ հենվելով ուսուցչի դասախոսության, մեկնաբանության, գիտելիքը պատրաստի մատուցելու վրա (տես՝հավելված 1) :

Նախ՝ սովորողներին տրվել է հայտորոշիչ թեստ՝ուղղական հոլովից՝ աշակերտների ունեցած գիտելիքները բացահայտելու նպատակով: Այն միջին բարդության էր, կազմված 10 հարցից, պարզից բարդը աստիճանակարգով:

Շարքից դուրս գրել ուղղական հոլովով դրված բառը, «այո» կամ «ոչ» պատասխան պահանջող պնդումներ, նախադասությունից դուրս գրել ուղղական հոլովով դրված բառը, տրված բառերը նախադասությունների մեջ կիրառել տարբեր պաշտոններով: Այս կամ այն տեսակի թեստից, բացակայած սովորողների տվյալները հաշվի չեն առնվել:

Թվում էր, թե առաջին՝ ամենահեշտ թվացող հարցում ամենաքիչ սխալները պիտի լինեին, բայց արդյունքները այլ բան էին ասում:

Ահա ուղղական հոլովի մասին հայտորոշիչ թեստի արդյունքները՝ տրամագրի/դիագրամ/ տեսքով:



Ինչպես արդեն նշվեց, նոր նյութի հաղորդումը կատարվեց դասախոսության մեթոդով: Սովորողների ուշադրությունը, իհարկե, հաջողվում էր պահել դասին, բայց ինքը՝ ուսումնառության գործընթացը, միևնույնն է, ակտիվ չէր, և երբ նույն թեստը տրվեց նյութի ուսումնասիրությունից հետո, շատ բան չէր փոխվել:

Այստեղ պետք է հաշվի առնել իրարից ինչ-որ բաներ արտագրած լինելու գործոնը, այլապես չէր կարող աշակերտը մինչև թեման ուսումնասիրելը մի բան իմանալ, թեման ուսումնասիրելուց մեկ օր հետո այդ նույն բանը չիմանալ. այդ է վկայում վարը նշված տրամագիրը:

Նույն թեստը՝ որպես ամփոփիչ



Դիտարկում 2

Հաջորդ թեման՝ սեռական հոլովը դասավանդելիս հենվել եմ ակտիվ՝ ինքնուրույն ուսումնառության վրա /Տես՝ հավելված 2/: Դասը ուսումնասիրել, թեման մշակել են իմ առաջարկած աղյուսակով: Նախ՝ առաջարկել եմ դասագրքից դուրս գրել, կազմել սեռական հոլովի հասցեն , այն է՝ առանձնահատկությունները հետևյալ կերպ.

Սեռական հոլով

●Ցույց է տալիս-

●Հարցերը-

●Շարահյուսական պաշտոնը-

●Որոշյալությունը-

Այս կետերի դիմաց նշել են համապատասխան առանձնահատկությունները, ապա առաջարկել եմ լրացնել հետևյալ աղյուսակը. կարդալ դասագրքի նյութը, դուրս գրել կանոնները, գրել համապատասխան սյունակում

-ի	-ու	-ան	-ոջ	-վա	-ց	ա	ո	

Վերջին սյունակը բաց թողնելը նպատակ ունի մտորել տալու, խթանելու քննադատական մտածողությունը: Այստեղ պիտի նշեն այլաձև հոլովման պատկանող բառերը:

Սեռական հոլովը տարողունակ թեմա է. դրա համար ամբողջ դասը տրամադրվել է նոր նյութի հաղորդմանը:

Չնայած այս դասարանում շատ ջանքեր, ժամանակ է պահանջվում դասագրքի նյութի վրա ինքնուրույն աշխատելու համար, այնուամենայնիվ արդյունավետությունը ավելի բարձր էր. դա ակնհայտ էր հենց դասի ընթացքում. ուժեղ աշակերտները միանգամից կողմնորոշվում են, դասը հեշտությամբ յուրացնում, մյուսները օգնությամբ են դա անում, ցածր առաջադիմություն ունեցողներն էլ, սովորում են տեղեկությունը ինքնուրույն մշակել, ինչը աստիճանաբար պիտի ամրապնդի նրանց սովորել սովորելու կարողունակությունը:

Դիտարկենք արդյունքները

Հայտորոշիչ թեստ- սեռական հոլով



Ամփոփիչ թեստ- սեռական հոլով



Ակնհայտ է, որ ինքնուրույն ուսումնառության արդյունքներն ավելի բարձր են. սա հենց իրենք՝ աշակերտներն էլ են փաստում իրենց լրացրած հարցաթերթիկներում/տես՝ հավելվածը/:

Դիտարկում 3

Տրական հոլովն ուսուցանելիս հենվել եմ աշակերտների հետաքրքրությունների վրա: Քանի որ նախապես ուսումնասիրել էի նրանց նախասիրությունները/սպորտ, ֆուտբոլ, երաժշտություն, կենսաբանություն, բժշկություն, հեղինակավոր մարդիկ, մեքենաներ ևն/, դրանց վերաբերյալ հետաքրքիր տեղեկություն պարունակող նախադասություններ էի առանձնացրել, որոնք պարունակում էին տրական հոլովով դրված բառ: Այդ բառերը տրված էին ուղիղ ձևով, և սովորողներն իրենք պետք է ըստ իմաստի թեքված տեղադրեին նախադասության մեջ:

Օրինակ՝

●Սպիտակ կետի սիրտը չափերով մոտ է ----------/« Ֆոլցվագեն Ժուկ» /:

●/Մայքլ Ջորդան/ ----------քոլեջի երկրորդ կուրսում սովորելիս ասել են, որ չի կարող ընդունվել բասկետբոլի թիմ ցածր հասակի պատճառով:

●Մարդու ԴՆԹ-ն 30 տոկոսով համընկնում է հազարի ---------- /ԴՆԹ/:

● Շվեյցարացիներն այնքան բունկերներ են կառուցել, որ միջուկային պատերազմ սկսվելու դեպքում դրանք կարող են տեղավորել երկրի ամբողջ բնակչությանը այդ -------/օրեր/:

●Աշխարհի առաջնությունների, օլիմպիական խաղերի բացման ու փակման արարողությունների ժամանակ, ֆուտբոլային մրցանակաբաշխությունների ընթացքում գրեթե միշտ հնչող «Nessun Dorma» մեներգի համար երկրպագուները պարտական են աշխարհահռչակ իտալացի կոմպոզիտոր ----------/Ջակոմո Պուչինի/:

●Մեր ----------/մաշկ/ ավելի շատ կենդանի օրգանիզմներ կարող են ապրել, քան ամբողջ մոլորակի վրա՝ մարդիկ:

●Կապույտ աչքերով մարդիկ ավելի զգայուն են արձագանքում ---------- /ցավ/, քան մյուսները:

●Քամելեոնի լեզուն երկու անգամ գերազանցում է իր ----------/մարմին/:

●Վազորդը կարող է մեկնարկի 10 մետրում գերազանցել սպորտային ----------/մեքենա/:

●Վարորդներն ավելի շատ են եղնիկ սպանում ----------/ճանապարհներ/, քան որսորդները:

●Լեոնարդո դա Վինչին Մոնա Լիզայի շրթունքները ----------/նկարել/ տրամադրել է 12 տարի:

●Անատիդաեֆոբիան կպչուն վախ է, որ աշխարհում ինչ-որ տեղ մի բադ կա, որը հետևում է ----------/Դուք/:

●Շվեյցարիայում ծառայությունը բանակում տղամարդկանց համար պարտադիր է 18 տարեկանից: Տղամարդկանց մեծ մասը գտնվում է բանակային ռեզերվում, բոլոր տղամարդիկ պետք է տանը զենք և համազգեստ ունենան և պատրաստ լինեն ----------/ռազմական գործողություններ/ յուրաքանչյուր ----------/պահ/:

●Ստիվ Ջոբսն ասել է.«Իմաստ չունի խելացի մարդկանց ----------/աշխատանք/ ընդունել, հետո ----------/նրանք/ասել, թե ինչ պետք է անել. մենք

խելացի մարդկանց ենք ընդունում, որպեսզի---------- /մենք/ ասեն, թե ինչ անենք»:

●Քաջություն ունեցեք հետևելու ձեր ----------/սիրտ և ինտուիցիա/: Նրանք ինչ-որ կերպ արդեն գիտեն, թե ով եք դուք իրականում և ինչ եք ուզում դառնալ:

●Անկե՛ղծ եղիր ինքդ քեզ և մարդկանց հետ, միշտ ամեն ինչ արա՛ ----------/ժամանակ/, երբեք մի՛ հանձնվիր, տրվի՛ր քո նպատակների ----------/կատարում/, նույնիսկ եթե ամեն ինչ վատ է:

Սա շատ հետաքրքրեց երեխաներին: Արդյունքներն իհարկե հարյուրտոկոսանոց չէին, բայց ակտիվությունն անհամեմատ մեծ էր, ներգրավվածությունը՝ նույնպես նախորդ դասերի համեմատ:

Ընթացքում գրատախտակին գծել եմ հետևյալ աղյուսակը

Ու՞մ, ինչի՞ն	Ե՞րբ	Որտե՞ղ	Ինչու՞, ի՞նչ նպատակով

Այն լրացնելով՝ ստացել են տրական հոլովի շարահյուսական դերը:



Ապա ընդգծել են վերջավորությունները՝ նկատելով, որ դրանք տարբեր են. մերթ որոշյալ են, մերթ անորոշ: Այսպիսով տրական հոլովի այս և մյուս առանձնահատկությունները իրենք առանց դասագրքի դուրս են բերել, առանձնացրել:



Ապա հանձնարարվել է ձևակերպել մեկական ճիշտ և սխալ պնդումներ, ինչը նույնպես հետաքրքրությամբ են արել և քննարկել դրանք զույգերով:

Տրական հոլովից հայտորոշիչ թեստ չեմ տվել/իմ շարունակական դիտարկումները կարճ ժամանակամիջոցում բավականին խիտ էին/: Տվել եմ ամփոփիչ թեստ:

Ամփոփիչ թեստ- տրական հոլով



Արդյունքներից պարզվեց, որ սովորողները լավ են յուրացրել՝ ա/ինչ է ցույց տալիս տրական հոլովը, բ/ առումը, գ/ինչ տեսք ունի տրական հոլովը, թեստի վերջին այունը վկայում է այն մասին, որ սովորողները թերացել են ամենաշատը տրական հոլովի՝ նպատակի պարագա լինելու վերաբերյալ հարցում: Թեստի արդյունքների վրա ազդել է նաև լավ սովորող աշակերտների բացակայած լինելու հանգամանքը:

Հետազոտության վերջին փուլում հարցախույզ եմ կատարել, որի մեջ սովորողները նշում են, որ դասով հետաքրքրված են լինում, երբ օրինակները

բերվում են կյանքից, կարողանում են դասագրքով ինքնուրույն սովորել, ակտիվ են մասնակցում, երբ զույգերով կամ փոքր խմբերով են աշխատում, հեշտ են յուրացնում դասը, երբ ինքնուրույն սովորելու հնարավորություն է տրվում/դասարանի կեսը/, երբ ուսուցիչն է ամբողջությամբ ներկայացնում դասը/դասարանի մյուս կեսը/:

Ամփոփում

Ժամանակակից աշխարհում անհրաժեշտ է վերաիմաստավորել կրթական նպատակները՝ գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումից մինչև սովորողի՝ որպես ապագա ակտիվ գործիչի անհատականության ձևավորումը, հետևաբար ուսումնական հաստատությունների գործունեության հիմնական խնդիրն է խթանել սովորողների մոտիվացիան:

Այս խնդիրը առանձնապես արդիականություն է ձեռք բերում ավագ դպրոցում, քանի որ նախ՝ հենց այս ժամանակահատվածում է տեղի ունենում աշակերտի ինքնորոշումը, և երկրորդ՝ այս տարիքում նկատվում է կրթական մոտիվացիայի նվազում: Ուստի շատ կարևոր է ուշադրության կենտրոնում պահել ոչ թե այն գիտելիքը, որ պիտի ստանա սովորողը, այլ այն, թե ինչ ճանապարհով վառել սովորելու ցանկությունը, սովորողի երևակայությունը, ուստի ելնելով իմ ուսումնասիրությունից և փորձից ՝ առանձնացնում եմ հատկապես հետևյալ ռազմավարությունները՝

●սահմանել հստակ և կարճաժամկետ նպատակներ

●բովանդակությունը կապել առօրյա կյանքի հետ

●հաշվի առնել հետաքրքրություններն ու հակումները

●աշխատանքը գրավիչ դարձնել

●ցույց տալ արարքների հետևանքները

●տոնել բոլոր հաջողությունները, վերլուծել անհաջողությունները

●խթանել երկխոսությունը դասարանում

●խրախուսել ցանկացած հաջողություն

●հնարավորություն /շանս/ տալ սովորողին

●գովել, նշել ձեռքբերումները

●գտնել արտառոց/ոչ ստանդարտ/ լուծումներ

●քննադատել՝ կարեկցանք դրսևորելով:

Գրականության ցանկ

●«Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները», Այռեքս, 2004

●Մեթոդական ձեռնարկ ավագ դպրոցի ուսուցչի համար, Երևան,,2012

●Roger Morrison, School motivation: causes effects and activities

● Развитие Мотивации Учения У Старших Школьников, ЖУРНАЛ «НАУЧНЫЙ ЛИДЕР» ВЫПУСК #12 (14), МАЙ ‘21, Рубрика**Психология**

Однобокова Анастасия Сергеевна, Лазарева Елена Геннадьевна

Հավելվածներ

1

Ուսուցիչ/Հեղինակ _ Հասմիկ Ավանեսյան

Առարկա	*Հայոց լեզու*
Դասարան/ Կիսամյակ	*XI«գ» ֆիզմաթ հոսք*
Թեմա	*Ուղղական հոլով*
Օգտագործվող նյութեր՝	*Դասագիրք՝ 11-րդ դասարան* *Հայտորոշիչ թեստ ուղղական հոլովի վերաբերյալ*
Դասի նպատակ	*Ներկայացնել ուղղական հոլովի առանձնահատկությունները* *Զևավորել խոսքի մեջ ուղղական հոլովը ճիշտ կիրառելու հմտություններ*
Վերջնարդյունքները	*Աշակերտը կկարողանա.* ● *թվարկել ուղղական հոլովի առանձնահատկությունները*

	• տեքստում գտնել ուղղական հոլովով դրված բառերը • որոշել ուղղական հոլովով դրված բառերի շարահյուսական պաշտոնները • խոսքի մեջ ճիշտ կիրառել ուղղական հոլովը
Դասի ընթացք/ ընտրված մեթոդ/ներ	Մեթոդները՝ ավանդական- դասախոսություն, ուղղորդված ընթերցանություն Հին նյութի հարցում -ստուգվում են տնային աշխատանքները Նոր նյութի հաղորդում Խթանում- Ուղղական բառի կազմությունը ուղիղ՝ արմատ, ական՝ ածանց բացատրությունը՝ բառի ուղիղ ձևը Հայտորոշիչ թեստ՝ ուղղական հոլովից ունեցած նախնական, նստվածքային գիտելիքները բացահայտելու նպատակով Նոր նյութի հաղորդում՝ դասախոսության մեթոդով Կշռադատում՝ Վարժություն 34 Կազմել նախադասություն՝ բժիշկ բառը կիրառելով ուղղական հոլովի տարբեր շարահյուսական պաշտոններով
Տերմիններ – հիմնական գաղափար	Ուղղական հոլով Ենթակա Գոյական որոշիչ Կոչական Ստորոգելի
Տնային աշխատանք	• Կազմել նախադասություններ՝ երգահան, նկարիչ, Անի բառերը կիրառելով որպես ուղղական հոլովով դրված բառեր • Վարժ. 33

2

Առարկա	Հայոց լեզու
Դասարան/ Կիսամյակ	XI«գ» ֆիզմաթ հոսք
Թեմա	Սեռական հոլով

Օգտագործվող նյութեր՝	*Դասագիրք՝ 11-րդ դասարան* *Հայտորոշիչ թեստ սեռական հոլովի վերաբերյալ*
Դասի նպատակը	***Ներկայացնել ուղղական հոլովի առանձնահատկությունները*** ***Զնավորել խոսքի մեջ ուղղական հոլովը ճիշտ կիրառելու հմտություններ***
Վերջնարդյունքները	*Աշակերտը կիմանա* *սեռական հոլովի առանձնահատկությունները,* *կհասկանա սեռական հոլովի իմաստը* *կկարողանա* •*թվարկել հոլովումները* •*տեքստում գտնել սեռական հոլովով դրված բառերը* •*որոշել սեռական հոլովով դրված բառերի շարահյուսական պաշտոնները* •*խոսքի մեջ ճիշտ կիրառել սեռական հոլովը*
Դասի ընթացք/ ընտրված մեթոդ/ներ	*Հին նյութի հարցում –թեստով ամփոփվում են անցած թեմայից ստացված գիտելիքները, գնահատվում* *Նոր նյութի հաղորդում* *Հայտորոշիչ թեստ՝ սեռական հոլովի մասին եղած նախնական գիտելիքները բացահայտելու նպատակով* *Խթանում- գրատախտակին տրվում են ուղղական և սեռական հոլովով դրված բառեր, հանձնարարվում խմբավորել, ապա նկատում են, որ մի խմբի բառերը պատկանելություն են ցույց տալիս* *Իմաստի ընկալում- Առաջարկվում է կարդալ դասագրքից ներածական մասը, կազմել սեռական հոլովի հասցեն՝* Սեռական հոլով •Ցույց է տալիս- պատկանելություն, վերաբերություն •Հարցերը- ու՞մ, ինչի՞/ինչերի՞/ •Շարահյուսական պաշտոնը-հատկացուցիչ, որոշիչ •Որոշյալությունը- որոշիչ հոդ չի ստանում Առաջարկվում է դասագքից դուրս գրել տրված հոլովումների մասին կանոնները, լրացնել տրված աղյուսակը, վերջին սյունակը դատարկ է. ինքնուրույն պետք է հասկանան, որ այն այլաձև հոլովման համար է :

-ի	-ու	-ան	-ոջ	-վա	-ց	ա	ո	

	<table><tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr></table> *Կազմել նախադասություն՝ տրված բառերի սեռական հոլովով, որոշել շարահյուսական պաշտոնները* *Կշռադատում՝ Կազմել մեկական ճիշտ և սխալ պնդումներ*
Տերմիններ – հիմնական գաղափար	*Սեռական հոլով* *Հատկացուցիչ* *Որոշիչ* *Կապի խնդիր*
Տնային աշխատանք	• *Վարժ. 35, 37*

Հայտորոշիչ թեստ

Դասարանը՝ XI 4
Թեման՝ ուղղական հոլով
Բարդության աստիճանը՝ միջին
Հարցերի քանակը՝ 10

1.Շարքից դուրս գրել ուղղական հոլովով դրված բառերը: /1մ./
Անտառ , շարժմանը, տեսաժապավենը, լեռան, փոստարկղեր, Արամենք, գրքերում, շենքից

2.Ուղղական հոլովը նախադասության մեջ լինում է՝ /1մ./
ա/կոչական, ենթակա
բ/ կոչական, որոշիչ, ենթակա
գ/ կոչական, ենթակա, ստորոգելի, որոշիչ
դ/ կոչական, ենթակա, ստորոգյալ, որոշիչ

3.Պնդումներից ո՞րն է ճիշտ: /1մ./
•Ուղղական հոլովով բառը հոգնակի չի կարող դառանալ:
•Այս հոլովը ուղղական է կոչվում, որովհետև ցույց է տալիս բառի ուղիղ ձևը:

4.Ուղղական հոլովը կարող է ստանալ *ը, ն* որոշիչ հոդերը: /1մ./
ա/ այո
բ/ոչ

5.Նախադասություններից դուրս գրել ուղղական հոլովով բառերը: /2մ./
ա/Ձին մոտեցավ մսուրին և սկսեց ուտել այնտեղ լցված գարին:
---------մսուրին գարի----------
բ/Աշուն, այս հրաշք վրձինը ո՞վ է տվել քեզ:
---------վրձինը----------

6.Բժիշկ, լուսին, լեռներ, գինի բառերը նախադասության մեջ գործածել ուղղական հոլովի տարբեր կիրառություններով: /4մ./

1. Բժիշկը գրեց նոր դեղատոմս
2. Լուսինը իմ համար ամենա գեղեցիկ աստղերից մեկն է
3. Հիրավի՞ սարերում դեռ գեղեցիկ լեռներ
4. Ես խմեցի գինի երբ նրանց ստուգատեսին

Յոգար Հարության
11 դասարան

Փակագծերում տրված բառերը տեղադրել համապատասխան ձևով:

• Աշխարհի առաջնությունների, օլիմպիական խաղերի բացման ու փակման արարողությունների ժամանակ, ֆուտբոլային մրցանակաբաշխությունների ընթացքում գրեթե միշտ հնչող «Nessun Dorma» մեներգի համար երկրպագուները պարտական են աշխարհահռչակ իտալացի կոմպոզիտոր Ջակոմո Պուչինի/:

• Մեր --Տաշվելիս--/մաշկ/ ավելի շատ կենդանի օրգանիզմներ կարող են ապրել, քան ամբողջ մոլորակի վրա՝ մարդիկ:

• Կապույտ աչքերով մարդիկ ավելի զգայուն են արձագանքում --ցավին-- /ցավ/, քան մյուսները:

• Սպիտակ կետի սիրտը չափերով մոտ է --Ֆոլցվագեն ժուկի--/Ֆոլցվագեն Ժուկ/:

• Քամելեոնի լեզուն երկու անգամ գերազանցում է իր --Տարմին--/մարմին/:

• --Մայքլ Ջորդանին--/Մայքլ Ջորդան/ քոլեջի երկրորդ կուրսում սովորելիս ասել են, որ չի կարող ընդունվել բասկետբոլի թիմ ցածր հասակի պատճառով:

• Վագորդը կարող է մեկնարկի 10 մետրում գերազանցել սպորտային --Մերենային--/մեքենա/:

• Վարորդներն ավելի շատ են եղնիկ սպանում --Ճանապարհին--/ճանապարհներ/, քան որսորդները:

• Մարդու ԴՆԹ-ն 30 տոկոսով համընկնում է հազարի --դեղձի--/ԴՆԹ/:

• Լեոնարդո դա Վինչին Մոնա Լիզայի շրթունքները --նկարել--/նկարել/ տրամադրել է 12 տարի:

• Անատիդաեֆոբիան կպչուն վախ է, որ աշխարհում ինչ-որ տեղ մի բադ կա, որը հետևում է --ձեզ-- /Դուք/:

• Միջուկային պատերազմ սկսվելու դեպքում շվեյցարացիներն այնքան բունկերներ են կառուցել, որոնք ընդունակ են տեղավորել երկրի ամբողջ բնակչությանը այդ --օրերի--/օրեր/:

• Շվեյցարիայում ծառայությունը բանակում տղամարդկանց համար պարտադիր է 18 տարեկանից: Տղամարդկանց մեծ մասը գտնվում է բանակային ռեզերվում, բոլոր տղամարդիկ պետք է տանը զենք և համազգեստ ունենան և պատրաստ լինեն --ռազմական գործողությունների--/ռազմական գործողություններ/ յուրաքանչյուր --պահի--/պահ/: պահի:

• Ստիվ Ջոբսն ասել է.«Իմաստ չունի խելացի մարդկանց --աշխատանքի--/աշխատանք/ ընդունել, հետո --նրանց--/նրանք/ասել, թե ինչ պետք է անել. մենք խելացի մարդկանց են ընդունում, որպեսզի--մենք--/մենք/ ասեն, թե ինչ անենք»:

• Քաջություն ունեցեք հետևելու ձեր --սրտի և ինտուիցիայի--/սիրտ և ինտուիցիա/: Նրանք ինչ-որ կերպ արդեն գիտեն, թե ով եք դուք իրականում և ինչ եք ուզում դառնալ:

Անկե՛ղծ եղիր ինքդ քեզ և մարդկանց հետ, միշտ ամեն ինչ արա՛ --ճամանակի--/ժամանակ/, երբեք մի՛ հանձնվիր, տրվի՛ր քո նպատակների --կարիքների--/նպատարում/, նույնիսկ եթե ամեն ինչ վատ է:

Անուն-ազգանուն - Հարությունյան Վերոնիկա

Դասարանը՝ XI դ.
Թեման՝ տրական հոլով
Բարդության աստիճանը՝ միջին
Հարցերի քանակը՝ 5

+ 1. Տրական հոլովը ցույց է տալիս՝
ա/ պատկանելություն
բ/ վերաբերություն
գ/հանգում
դ/անջատում

+ 2. Ո՞րն է տրական հոլովով դրված
ա/ սրտին
բ/սրտից
գ/սրտով
դ/սրտում

+ 3.Տրական հոլովը կարող է ստանալ որոշիչ հոդ:
ա/այո
բ/ոչ

4.Տրված բառերը դնել տրական հոլովով:
+ այգի- այգուն
+ ծառ- ծառին
+ քույր- քրոջն

5.Նախադասություններից դուրս գրել տրական հոլովով բառերը, որոշել պաշտոնը:
ա/Գարնանը արագիլները կվերադառնան իրենց բները:

+ Գարնանը - ՀՊ որոշիչ
–

բ/Մոտեցա նկարչին և խնդրեցի մեկնաբանել նկարներից մեկը:

+ Նկարչին - ԵՊ
–

գ/Զյուն իջավ լեռների լանջերին, և ցուրտը իրեն զգացնել տվեց:

+ լանջերին - խարդախ ոլոր
–

դ/Փոքրին ուղարկեցին ջրի:

– Փոքրին - ԵՊ
–

Հարցաթերթ

Անուն-ազգանուն--- Հարությունյան Աստղիկ 11գ

1.Ո՞ր դեպքում եք հետաքրքրված լինում դասով:

ա/երբ օրինակները բերվում են կյանքից, իմ սիրած թեմաներից
բ/ դասագրքի օրինակներով
գ/տարբերություն չկա
դ/այլ/Ձեր տարբերակը/---

2. Կարողանու՞մ եք արդյոք ինքնուրույն աշխատել դասագրքով:

ա/այո
բ/ուսուցչի, ընկերոջ ուղղորդմամբ
գ/դժվարանում եմ
գ/այլ /Ձեր տարբերակը/-----

3. Ուսումնառության ո՞ր տարբերակի դեպքում եք դաս ակտիվ մասնակցում : Նշեք Ձեր նախընտրած ձևը /կամ ձևերը/

ա/դասարանական քննարկումներ,
բ/ խմբային աշխատանք փոքր խմբերով
գ/խնդրի վրա զույգով աշխատանք
ե/այլ՝ Ձեր տարբերակը-----

4. Ո՞ր դեպքում եք ավելի հեշտ յուրացնում դասը,
նոր նյութը սովորելիս ո՞ր տարբերակն եք նախընտրում:

ա/երբ ուսուցիչն է ամբողջ դասանյութը ներկայացնում
բ/երբ ուսուցիչը դասագրքից ինքնուրույն սովորելու հնարավորություն է տալիս
գ/այլ՝ Ձեր տարբերակը-----

5.Ուսումնական ի՞նչ կարիք ունեք, որը կբարելավի հայոց լեզվից Ձեր գիտելիքները, կբարձրացնի հետաքրքրվածությունը առարկայի նկատմամբ /ազատ շարադրեք/:

Օգտակար աշխատանք:

Հարցաթերթ

Անուն-ազգանուն--- Հռիփսիմե Գրիգորյան 11 «գ»

1.Ո՞ր դեպքում եք հետաքրքրված լինում դասով:

ա/երբ օրինակները բերվում են կյանքից, իմ սիրած թեմաներից
բ/ դասագրքի օրինակներով
գ/տարբերություն չկա
դ/այլ/Ձեր տարբերակը/---

2. Կարողանու՞մ եք արդյոք ինքնուրույն աշխատել դասագրքով:

ա/այո
բ/ուսուցչի, ընկերոջ ուղղորդմամբ
գ/դժվարանում եմ
գ/այլ /Ձեր տարբերակը/-----

3. Ուսումնառության ո՞ր տարբերակի դեպքում եք դաս ակտիվ մասնակցում : Նշեք Ձեր նախընտրած ձևը /կամ ձևերը/

ա/դասարանական քննարկումներ,
բ/ խմբային աշխատանք փոքր խմբերով
գ/ խնդրի վրա զույգով աշխատանք
ե/այլ՝ Ձեր տարբերակը-----

4. Ո՞ր դեպքում եք ավելի հեշտ յուրացնում դասը,
նոր նյութը սովորելիս ո՞ր տարբերակն եք նախընտրում:

ա/երբ ուսուցիչն է ամբողջ դասանյութը ներկայացնում
բ/երբ ուսուցիչը դասագրքից ինքնուրույն սովորելու հնարավորություն է տալիս
գ/այլ՝ Ձեր տարբերակը-----

5.Ուսումնական ի՞նչ կարիք ունեք, որը կբարելավի հայոց լեզվից Ձեր գիտելիքները, կբարձրացնի հետաքրքրվածությունը առարկայի նկատմամբ /ազատ շարադրեք/:

Շատ կարիք կա: հայոց լեզվի դասերը իմաստ
հետաքրքիր են:

Հարցաթերթ

Անուն-ազգանուն--- [illegible]

1.Ո՞ր դեպքում եք հետաքրքրված լինում դասով:

ա/երբ օրինակները բերվում են կյանքից, իմ սիրած թեմաներից
բ/ դասագրքի օրինակներով
գ/տարբերություն չկա
դ/այլ/Ձեր տարբերակը/---

2. Կարողանու՞մ եք արդյոք ինքնուրույն աշխատել դասագրքով:

ա/այո
բ/ուսուցչի, ընկերոջ ուղղորդմամբ
գ/դժվարանում եմ
գ/այլ /Ձեր տարբերակը/-----

3. Ուսումնառության ո՞ր տարբերակի դեպքում եք դաս ակտիվ մասնակցում : Նշեք Ձեր նախընտրած ձևը /կամ ձևերը/

ա/դասարանական քննարկումներ,
բ/ խմբային աշխատանք փոքր խմբերով
գ/ խնդրի վրա զույգով աշխատանք
ե/այլ՝ Ձեր տարբերակը-----

4. Ո՞ր դեպքում եք ավելի հեշտ յուրացնում դասը,
նոր նյութը սովորելիս ո՞ր տարբերակն եք նախընտրում:

ա/երբ ուսուցիչն է ամբողջ դասանյութը ներկայացնում
բ/երբ ուսուցիչը դասագրքից ինքնուրույն սովորելու հնարավորություն է տալիս
գ/այլ՝ Ձեր տարբերակը-----

5.Ուսումնական ի՞նչ կարիք ունեք, որը կբարելավի հայոց լեզվից Ձեր գիտելիքները, կբարձրացնի հետաքրքրվածությունը առարկայի նկատմամբ /ազատ շարադրեք/:

[illegible]

Հարցաթերթ

Անուն-ազգանուն--- Հրաչյա Հովսեփյան

1.Ո՞ր դեպքում եք հետաքրքրված լինում դասով:

ա/երբ օրինակները բերվում են կյանքից, իմ սիրած թեմաներից
բ/ դասագրքի օրինակներով
գ/տարբերություն չկա
դ/այլ/Ձեր տարբերակը/---

2. Կարողանու՞մ եք արդյոք ինքնուրույն աշխատել դասագրքով:

ա/այո
բ/ուսուցչի, ընկերոջ ուղղորդմամբ
գ/դժվարանում եմ
գ/այլ /Ձեր տարբերակը/-----

3. Ուսումնառության ո՞ր տարբերակի դեպքում եք դաս ակտիվ մասնակցում : Նշեք Ձեր նախընտրած ձևը /կամ ձևերը/

ա/դասարանական քննարկումներ,
բ/ խմբային աշխատանք փոքր խմբերով
գ/ խնդրի վրա զույգով աշխատանք
ե/այլ՝ Ձեր տարբերակը-----

4. Ո՞ր դեպքում եք ավելի հեշտ յուրացնում դասը,
նոր նյութը սովորելիս ո՞ր տարբերակն եք նախընտրում:

ա/երբ ուսուցիչն է ամբողջ դասանյութը ներկայացնում
բ/երբ ուսուցիչը դասագրքից ինքնուրույն սովորելու հնարավորություն է տալիս
գ/այլ՝ Ձեր տարբերակը-----

5.Ուսումնական ի՞նչ կարիք ունեք, որը կբարելավի հայոց լեզվից Ձեր գիտելիքները, կբարձրացն
հետաքրքրվածությունը առարկայի նկատմամբ /ազատ շարադրեք/:

Դասընթացքում հայոց լեզվի հետաքրքիր վարժություններ կատարել խմբերով: